ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» փետրվարի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դավիդյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

«ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները («ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ի էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N 1) 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ):

Հանձնաժողովը որոշեց.

«ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) 1-ին չափաբաժնի մասով մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 2-րդ չափաբաժնի մասով Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին չափաբաժնի մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2. 2-րդ չափաբաժնի մասով այն մասնակիցների հայտերը, ում կողմից աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում 2-րդ չափաբաժնով գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը, Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Ձեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան